ԱՐԾՐՈՒՆԻ ՍԱՀԱԿՅԱՆ
Պատմական եւ բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ ԵՒ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄՆ ԱՐԵՒԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Կաթողիկոսական Աթոռի վերադարձից (1441 թ.) մինչեւ պետականության վերականգնումը (1918 թ.) տեղի են ունեցել իրադարձություններ, որոնք, բխելով աշխարհաքաղաքական, պատմական համատեքստից, պայմանավորել են մեկը մյուսին եւ ի վերջո հանգեցրել Հայաստանի առաջին հանրապետության ստեղծմանը։ Սույն հոդվածում վեր է հանվում հենց այն անուղղակի կապը, որ պատմական հետադարձ հայացքով տեսանելի է դառնում 1441 եւ 1918 թվականների միջեւ։ Եթե չլիներ վերադարձի փաստը, գաղթի եւ այլ ուղիներով կդատարկվեին վերջին հայկական բնակավայրերը, եւ երկրամասի վրայից կհանվեր Հայաստան անունը։

* * *

Եկեղեցին, որպես կանոն, մշտապես հայ ժողովրդի հետ համահավասար կրել է նրա քաղաքական բախտի բոլոր վայրիվերումների հետեւանքները։ Բայց միշտ չէ, որ իբրեւ ինքնուրույն քաղաքական սուբյեկտ եւ պատմություն կերտող ուժ՝ կարողացել է ազդել հայ ժողովրդի պատմական ճակատագրի վրա՝ փոխադրելով այն դեպի ավելի բարենպաստ զարգացման ուղի։ Եթե փորձենք ընդհանրական առումով ի մի բերել Եկեղեցու խաղացած բախտորոշ դերերը հայ ժողովրդի գոյատեւման վերջին տասնվեց դարերում, ապա կստանանք մի քանի առանցքային իրադարձություններ, որոնց լիարժեք հեղինակը կամ համահեղինակը Եկեղեցին էր։

Առաջինը Եկեղեցու միջոցով քրիստոնեական քաղաքակրթության արժեքների եւ գրավոր մշակույթի ներդրումն էր հայոց կյանքում։

Երկրորդը տարբեր երկրներում գաղութահայերի հավաքումն էր մի համայնքի մեջ՝ եկեղեցու շուրջ, ինչին էլ պարտական ենք ոչ միայն պատմական, այլեւ սփյուռքահայ այդքան գաղութների գոյության համար։

Երրորդը ազգի, հայրենիքի ազատագրման, ինքնուրույն պետականության գաղափարների մերթ անթեղված, մերթ վառ պահելն էր Եկեղեցու՝ որպես միակ համահայկական կառույցի ծոցում։

Չորրորդը 1946–47 թթ. Մեծ հայրենադարձության կազմակերպումն էր, որն անհնար կլիներ առանց Եկեղեցու մասնակցության[1]։

Հինգերորդը Կաթողիկոսական Աթոռի վերադարձն էր Վաղարշապատ՝ Ս. Էջմիածին, 1441 թ., ինչին նվիրված է սույն աշխատանքը։

Նախ՝ ինչ կապ կա Մայր Աթոռի վերադարձի եւ անկախ պետականության վերականգնման միջեւ։

Այդ կապն անուղղակի է, որովհետեւ Մայր Աթոռի վերադարձը կազմակերպողների խոհերի ու ծրագրերի մեջ այն չէր արտահայտվել։ Անուղղակի է, քանզի հայ վարդապետական շրջանակներում դեռ ընթերցում ու քննարկում էին Ս. Սահակի տեսիլը, ըստ որի՝ դեռ կպայծառանա Ս. Էջմիածինը, եւ նրա հետ էլ կնորոգվի Արշակունիների թագավորական գահը։ Այնպես որ Մայր Աթոռի վերադարձը Ս. Էջմիածին չէր կարող հոգեւորականության եւ ուսյալ աշխարհականների պատկերացումներում չզուգորդվել հայոց երբեմնի թագավորության բաղձալի «հարության» հետ։

Դրա մի վկայություն կարելի է դիտել դեռեւս մեկուկես դար առաջ Ստեփանոս Օրբելյանի՝ Վաղարշապատին նվիրված չափածո ներբողական ողբը, որը պետք է համարել ժամանակի հանրային կարծիքի յուրօրինակ արտահայտում[2]։ Իհարկե, եկեղեցական վերնախավի եւ լայն հոգեւորականության մտածելակերպի մեջ Մայր Աթոռի վերադարձի հարուցած հոգեբանական զուգորդումները չէ, որ պետք է համարել առանցքային երեւույթ ժողովրդի կյանքում, մանավանդ որ այդ եկեղեցաքաղաքական գործողությունը, ըստ Թովմա Մեծոփեցու[3], ծնել է մի շարք տեսիլներ, որոնք առանձնապես համազգային բնույթ չեն կրել, հանրային շահ

---

[1] *Տե՛ս Հ. ԵՆԳԻԲԱՐՅԱՆ, Հայ առաքելական եկեղեցին եւ Մեծ հայրենադարձության պետական ծրագիրը, «Հայ աստվածաբան» գիտական հոդվածների ժողովածու, հտ. 5, Երեւան, 2013, էջ 140–153։*

[2] *Ողբ ի դիմաց Վաղարշապատու Ս. Կաթուղիկէին. տե՛ս «Գանձարան հայ հին բանաստեղծության», աշխ.՝ Պ. Խաչատրյանի, Երեւան, 2000, էջ 402–405։*

[3] *ԹՈՎՄԱ ՄԵԾՈՓԵՑԻ, Պատմագրություն, աշխ.՝ Լ. Խաչիկյանի, Երեւան, 1999, էջ 237–253։*

չեն արտահայտել, ժողովրդական կյանքին ու մշակույթին նոր թափ չեն հաղորդել։

Այդ ամենը, հարկավ, այդպես է, բայց դրա կողքին պատմությունը մեզ է վկայել նաեւ նշավակյալ երեւույթների դեմ ըմբոստացման, հակադրման փորձեր, որոնք վերջին հաշվով միտված էին հայոց անկախ պետականության վերականգնմանը։ Հենց առաջինը Վաղարշապատի կաթողիկոսներից ԺԵ. դ. երկրորդ կեսին կառավարող Զաքարիա Աղթամարցին էր, որը Եկեղեցու բոլոր լծակներն օգտագործեց հայոց նոր թագավորություն հիմնելու համար։

Բանն այնտեղ էր հասել, որ արդեն պատրաստվում էին կաթողիկոսի եղբոր որդուն՝ Սմբատ Արծրունուն, թագավոր օծելու արարողությանը։ Այդ առիթով Զաքարիան 1461 թ. պատվիրել էր հավանաբար Կիլիկիայից բերված մի հնամյա Մաշտոց-ծիսարանի ընդօրինակություն,[4] որի գրիչն էր կաթողիկոս Զաքարիայի քրոջ որդի Ստեփանոսը, եւ որը՝ արդեն որպես կաթողիկոս, իր քեռու մահից մեկ տարի անց՝ 1465 թ., Աղթամարում Սմբատին օծեց թագավոր։ Ցավոք, այդ նախաձեռնությունը, որ երկար ժամանակ էր պահանջել իրագործման համար, օծման ծեսով էլ ավարտվեց, որովհետեւ հովանավոր թուրքմեն թագավոր Ջհանշահը սպանվեց 1467 թ., ինչպես ցույց է տվել խորհրդահայ վաստակաշատ պատմաբան Լ. Խաչիկյանը։ Խնդիրն այն չէ, որ հայ թագավորը լինելու էր մի թույլ կցորդն իր գերագահի։ Խնդիրն այն է, որ Հայ Եկեղեցին ուժեր ու միջոցներ է կենտրոնացնում այդ նպատակին հասնելու համար, իսկ ձախողման դեպքում չի հուսահատվում, որովհետեւ գաղափարը միշտ վառ է մնում։

Եւ իրոք, հետագա դարերում պետականության ու ազգի ազատագրման գաղափարին ուղղված այնքան ձեռնարկումներ ենք գտնում Եկեղեցու պատմության մեջ[5], որ պարտավոր ենք գնահատելու դրանք որպես Հայ Եկեղեցու ազգօգուտ, պետականակերտ գործունեության դրսեւորումներ։

Բայց մի՞թե նույն գործունեությունը հնարավոր չէր վարել Սսից, մանավանդ որ Կիլիկիայում եւ Արեւմտյան Հայաստանում, որոնք

---

[4] *Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. 4997, թղթ «120ա—132բ» ԺԵ. դարի հայերեն ձեռագիր հիշատակարաններ, մասն Բ., կազմեց Լ. Խաչիկյան, Երեւան, 1967, էջ 237, 238, 309։ Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, Վաղարշապատի Մաշտոցը, «Էջմիածին», 1994, Զ.—Է., էջ 57—67։*

[5] *Տե՛ս Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գք. Բ., Երեւան, 1959. Հ. ԱՆԱՍՅԱՆ, 17-րդ դարի ազատագրական շարժումներն Արեւմտյան Հայաստանում, Երեւան, 1961. նաեւ՝ Ա. ԱՅՎԱԶՅԱՆ, Հայոց եկեղեցին 18-րդ դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում, Երեւան, 2003։*

գտնվում էին Օսմանյան կայսրության կազմում, ավելի հոծ հայություն էր ապրում։

Չէ՞որ Արեւելյան Հայաստանը, որ ԺԵ.—ԺԶ. դդ. լիովին դարձել էր մոնղոլ, թուրքմեն ու քուրդ ցեղերի արոտավայր, արագորեն հայաթափվում էր, չհաշված պարսկա-թուրքական պատերազմները, որոնք մեծ մասամբ տեղի էին ունենում հայկական տարածքներում, եւ որոնք ի վերջո հանգեցրին մի մեծ ժողովրդագրական աղետի՝ Շահ-Աբասի բռնագաղթին։

Հենց բանն էլ այդ է, որ ԺԵ. դարի Հայ Եկեղեցին, ենթագիտակցորեն զգալով Արեւելյան Հայաստանում ազգային գոյության վրա կախված սպառնալիքը, կարծես տեսնելով, թե ուր են տանում գալիք պատմական զարգացումները, իր կաթողիկոսարանը հաստատեց սպառնալիքների կիզակետում՝ կամա թե ակամա փորձելով մեղմել հայության գլխին գալիք համընդհանուր փլուզման, կործանման հետեւանքները։ Հետադարձ հայացք նետելու դեպքում Հայ Եկեղեցու ձեռնարկած այս աթոռափոխության գործողությունը մեզ երեւում է իբրեւ սխրագործություն, եւ ահա թե ինչու։

ԺԵ.—ԺԹ. դդ. Միջերկրական, Սեւ, Կասպից եւ Պարսից ծովերի միջեւ ապրող խառը բնակչության ազգամիջյան լեզու դարձավ թուրքերենը։ Այն աստիճանաբար ներթափանցում էր հայոց լեզվի, անգամ նրա հիմնական բառապաշարի մեջ։ Հաջորդ քայլը լինելու էր հայերենի քերականության թուրքացումը, եւ հայերի ուծացումը դառնալու էր զանգվածային ու վերջնական, ինչպես նշածս լեզվական աստիճանական փոփոխման հետեւանքով թրքացվեցին որոշ ժողովուրդներ թե՛ Փոքր Ասիայում, թե՛ իրանական սարահարթում։ Ոչ միայն թրքախոս քոչվոր եւ կիսաքոչվոր ցեղերն էին վերանվանում հայկական տեղանունները, այլեւ իրենք՝ հայերը, երբ նոր բնակավայր էին յուրացնում իրենց երկրի այլ գավառներում։ Որպես կանոն՝ թուրքերենով էին վերանվանվում հատկապես մանր տեղանունները։ Սովորաբար այս վերաբնակները լինում էին բարբառախոս անուս կամ թերուս գեղջուկներ։ Նրանք նոր տեղանուններն անվանում էին թուրքերենով ոչ այն պատճառով, որ այն բոլորին հասկանալի էր, այլ որ թուրքերենը ներծծվել էր իրենց բարբառի մեջ։ Այդ է պատճառը, որ նոր տեղանունը՝ որպես բաղադրյալ բառ, կազմվում էր երկլեզու բառերով, օրինակ՝ Աչաջուր, Խաչբուլախ, Կաղնուտ թալա եւ այլն։ Նոր հանդամասի, աղբյուրի, ձորակի կամ բացատի անունը նկարագրորեն հնչեցնելիս

նրանք չէին էլ մտածում, որ այդ անունը կամ նրա մի մասը օտար լեզվով է։ Իսկ ինչո՞ւ էին վերանվանում եւ չէին գործածում հին կամ նախկին տեղանունները։ Որովհետեւ նախկին բնիկների եւ հայ վերաբնակների միջեւ ավանդական մշակութային կապը խզված էր։ Միակ կապող օղակը կարող էր լինել Եկեղեցին՝ որպես նախկին ավանդույթի գիտակ կամ խուզարկու, որն էլ գիտեր եւ փոխանցում էր նոր բնակիչներին մեծ տեղանունները՝ գյուղ, ավան, քաղաք, գետ եւ այլն, բայց չգիտեր մանր տեղանունները։

Այսպիսով՝ Հայաստանը հետզհետե անվանափոխվում էր մի քանի եղանակով. նախ՝ սեփական ժողովրդի կողմից՝ անընդհատ ընթացող ներերկրային վերաբնակեցման հետեւանքով, ապա՝ հայերի կամ օտարների կողմից՝ հայկական տեղանունները թարգմանելով (օրինակ՝ Օձունք—Ուզունլար, Տիրակք—Դիրաքլար), երրորդ՝ օտարների կողմից՝ բնիկ տեղանունները վերանվանելով (Շիրակ—Շորագյալ, Մանաս— Ալավերդի եւ այլն), չորրորդ՝ օտարների, երբեմն եւ հայերի կողմից՝ բնիկ տեղանունները թուրքական արտասանությամբ քմայնացնելով եւ աղավաղելով (Քարավաճառ—Քյալբաջար, Կումայրի—Գյումրի եւ այլն)։

Երբեմն տեղանունների թուրքացման նշված եղանակները միաժամանակ հանդես են գալիս նույն բառի կազմության մեջ, ասենք, նոր տեղանունը կազմվում է ե՛ւ թարգմանաբար, ե՛ւ քմայնացմամբ (օր.՝ Եղեգնաձոր—Դարալագյազ)։ Թրքացված տեղանունների ամենամեծ մասը Հայաստանում ստեղծվել է վերոնշյալ հայ վերաբնակների կողմից՝ ներերկրային գաղթերի հետեւանքով՝ բարբառային նկարագրության եղանակով։ Վերջինս կարեւոր է գիտակցել հատկապես այն պատճառով, որ հաճախ նման եղանակով ստեղծված տեղանունների տակ որոշ գիտնականներ միամտորեն կամ միտումնավոր ենթադրում են թուրք ցեղախմբի գոյություն անգամ այն դեպքում, երբ հայտնի է, որ տվյալ գյուղում երբեւէ թուրք չի եղել։ Վերջին եղանակով տրված տեղանունները զանգվածաբար հայտնվեցին հատկապես ռուս-պարսկական եւ ռուս-թուրքական պատերազմներին հաջորդած վերաբնակեցումների ժամանակ (1828—1830 թթ.)։

Մի պահ պատկերացնենք ուշ միջնադարի Արեւելյան Հայաստանը՝ թրքացված տեղանուններով՝ Աղրիդաղ, Զանգու, Ալագյազ, Շորագյալ, Ալավերդի, Ղարաքիլիսա, Բորչալու, Այրում, Ղազախ, Աղստաֆա, Թովուզ, Գյոկչա, Ախտա, Էլառ, Ղամարլու, Էրիվան, Դավալու եւ այլն, եւ

այլն։ Այս համատարած թրքական անուններով էր շրջապատված Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, որի անունն անգամ փոխվեց եւ դարձավ Ուչքիլիսէ, բայց նրա շնորհիվ չփոխվեց այդ բոլոր թրքական տեղանունները յուր մեջ պարփակող երկրի անունը՝ Հայաստանը, Էրմենիստանը, Արմենիան։ Մինչդեռ «Հայաստան» անունը կարող էր վերանալ Արեւելյան Հայաստանի վրայից, եթե 1441 թ. չլիներ Մայր Աթոռի վերադարձը Ս. Էջմիածին։

Այդուհետեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հենց ինքն իրենով, իր գոյության իսկ փաստով, գործուն լինելու եւ գործառույթներ ունենալու երաշխիքներով ապահովեց երկրամասի «Հայաստան» կոչումը ոչ միայն անվանապես, այլեւ փաստացիորեն՝ հայաբնակ պահելով գոնե իրեն պատկանող շրջակա գյուղերը։

Կգա մի տարի, եւ Շահ-Աբաս I-ը կդատարկի Արեւելյան Հայաստանը՝ քրիստոնյա բնակչությանը քշելով դեպի Պարսկաստան Թիֆլիսից մինչեւ Ջուղա, բայց Մայր Աթոռ Ս. Էջմիածինը կմնա իր տեղում անդրդվելի՝ որպես նույն գաղթականներին ու նրանց գալիք սերունդներին դեպի ետ ձգող ուժ։ Իզուր չէ, որ դատարկված տարածքները նույն՝ ԺԷ. դարի ընթացքում եւ հետագա՝ ԺԸ. դարում, թուրք-քրդական գյուղերով խճողված լինելով, կրոնով եւ կենցաղով տեղ-տեղ նորից դարձան հայաշունչ, թեկուզ հայոց բարբառները գնալով ավելի ու ավելի էին դառնում թրքահունչ։ Իհարկե, հայաշունչ դարձան ոչ միայն Արեւմտյան Հայաստանից եկածներով ու Պարսկաստանից վերադարձածներով, այլեւ Արցախի մելիքների նշանավոր գաղթով ԺԸ. դ. վերջին քառորդում։

Այսինքն՝ եթե օտար վերաբնակեցումներն ու բռնի տարհանումները՝ որպես միանգամայն աղետալի գործողություններ, ավերիչ հետեւանքներ էին թողնում Արեւելյան Հայաստանի ժողովրդագրական քարտեզում, ապա Մայր Աթոռի ձգողական ուժը՝ որպես հակազդող գործողություն, իրականացվում էր աննկատ, բայց անընդհատ՝ մինչեւ այդ իսկ քարտեզի վերախմբագրումը ԺԹ. դ. առաջին 30-ամյակին։

Եւ իսկապես, քանի որ տեղի ունեցավ Մայր Աթոռի վերադարձը, Արեւելյան Հայաստանի անունը չփոխվեց։ Քանի որ չփոխվեց Արեւելյան Հայաստանի անունը, անգամ Շահ-Աբասի բռնագաղթից հետո նորից տեղ-տեղ հայաշունչ դարձավ երկիրը։ Քանի դեռ կար երկիրը, Ռուսաստանը այն գրավեց իբրեւ Արեւելյան Հայաստան, իսկ նվաճումով եւ հաշտության պարտադրումով ետ պահանջեց նաեւ այն բնակչությանը, որին պատկանում էր այդ երկիրը (1828)։ Ռուսաստանը նույն կերպ

վարվեց նաեւ ռուս-թուրքական պատերազմից հետո, եւ հաշտության պարտադրումով դեպի Արեւելյան Հայաստան ուղղեց թրքահայության մեծ գաղթը։

Այսպիսով՝ ձեւավորվեց ժողովրդագրական մի նոր քարտեզ, որը, իր հետագա համալրումներով հանդերձ, չկորցրեց իր հիմնական ուրվագծերը մինչեւ օրս։

Եթե չլիներ Մայր Աթոռը Արարատյան դաշտում, չէր լինի ներգաղթ դեպի Արեւելյան Հայաստան, իսկ եթե ներգաղթի հետեւանքով չլիներ արեւելահայության հոծ ներկայություն իր բուն հայրենիքում, չէր ծնվի այնտեղ ոչ միայն պետություն, այլեւ նույնիսկ պետականության գաղափարի նշույլ։ Պատմական թռուցիկ ետհայացքն իսկ թույլ է տալիս տեսնել այն հզոր, բայց աներեւույթ կապը, որ գոյություն ունի 1441 թ. եւ 1918 թ. իրադարձությունների միջեւ. չլիներ Մայր Աթոռի վերադարձը, չէր լինի Հայոց առաջին հանրապետությունը։ Եւ գաղտնիք չէ, որ եթե չլիներ 1918—1920 թթ. Հայաստանի Հանրապետությունը, չէր լինի 1920—1991 թթ. Խորհրդային Հայաստանը, իսկ առանց վերջինիս՝ այժմյան Հայաստանի Հանրապետությունը։

Ու ինչն է հետաքրքիր։ Երեք հանրապետությունների գոյության 100 տարվա ընթացքում հիմնականում պետական ծրագրերով, կրթության, դաստիարակության, մշակութային միջոցառումների, գիտական-արտադրական գործունեության եւ առհասարակ արդյունաբերության ներդրման շնորհիվ հասարակությունը շարժվեց մի ուղով, որը ճիշտ հակառակ ընթացքն ուներ 1918 թ. նախորդող 500 տարվա շարժման ուղղության նկատմամբ։ Այսինքն՝ թուրքախառն բարբառների փոխարեն հայությունը յուրացրեց վերբարբառային խոսակցական եւ գրական մաքուր հայերենները, տեղանունները եւ անձնանունները, անգամ ազգանունները գիտակցաբար մաքրվեցին հետամնաց որակված թրքական եւ արեւելյան այլ ձեւերից, մշակույթի տարբեր ոլորտներում գերիշխող դարձան ազգային-ավանդական մաքուր ոճերը (երգ, պար, տարազ, խոհանոց եւ այլն), որոնք երբեմն թեեւ գիտականորեն հիմնավորված չէին, բայց վկայում էին սեփական ազգային-մշակութային արժեքների վերարթնացման մասին (օրինակ՝ մտավորականության զարթոնքը ԺԹ. դ. վերջին եւ Ի. դ. առաջին քառորդին, հասարակության հոգեւոր զարթոնքը Ի. դ. 60—80-ական թվականներին եւ այլն)։ Վերջապես՝ թեկուզ կիսանկախ պետականության պայմաններում

ձեւավորված այդ ազգային-հայրենասիրական զարթոնքն էր, որ ոտքի հանեց ողջ ժողովրդին եւ դեպի անկասելի հաղթանակ մղեց արցախյան ազատամարտի ժամանակ։

Արդեն 100 տարի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, գտնվելով հայոց պետության աշխարհագրական կենտրոնում, դարձել է համայն հայության հոգեւոր կենտրոնը, բայց աշխարհաքաղաքական մարտահրավերները նույնն են մնացել։ Մի կողմից՝ մոտ հազար տարի առաջ սկսված թրքական նվաճման գործընթացը կամաց-կամաց անփառունակ ու ամոթաբեր հաղթանակներով է ավարտվել Փոքր Ասիայում, Արեւմտյան Հայաստանում, Արեւելյան Հայաստանի մի զգալի մասում՝ Նախիջեւանում եւ Կուր գետի աջափնյա գավառներում, ողջ պատմական Աղվանքում, Ատրպատականում եւ այլն, մյուս կողմից՝ նվաճման դեմ սկսված պայքարը, դարեր ի վեր դանդաղեցնելով նրա ընթացքը, բայց եւ տեղի տալով, հասել է նրան, որ վերջապես կասեցրել է նվաճման հերթական փորձերը, որի շնորհիվ մնացել են չյուրացված կամ ապաթրքացված մի շարք տարածքներ Իրանում, Քրդստանում, Արեւելյան Հայաստանում եւ այլն։ Թե որ միտումը կհաղթի՝ նվաճման շարունակումը թե կասեցումը, ցույց կտա ժամանակը, որի հավերժ վկան կարող է դառնալ Ս. Էջմիածինը, եթե արդի եւ գալիք հանրապետությունները վարեն հայ ժողովրդին Արեւելյան Հայաստանում հայրենատեր դարձնելու քաղաքականություն։

РЕЗЮМЕ

Между возвращением патриаршего престола (1441 г.) и восстановлением государственности происходили события, которые, предопределяясь геополитическим, историческим контекстами, обуславливали друг друга и в конечном итоге привели к созданию первой Армянской Республики. В данной статье обнаруживается косвенная связь между 1441 и 1918 годами, которая открывается ретроспективному историческому взгляду. Не будь факта возвращения престола последние армянские поселения опустели бы в результате миграции или других причин, и название Армении было бы снято с данного участка земли.

SUMMARY

In the interval between the return of the Mother See to Holy Etchmiadzin (1441) and the restoration of the statehood (in 1918), events took place that, caused by geopolitical and historical aspects, determined each other and ultimately led to the creation of the first Armenian Republic. This article reveals an indirect connection between 1441 and 1918, which opens up to a retrospective historical view. If there hadn't been a fact of return, the last Armenian settlements would have been deserted as a result of migration or by other means, and the name of Armenia would have been removed from the regional map.